

ՊԵՏՄԵՐԱԿԱՆ

ՍԱՐԳԻՍ Վ. ԿՈՒՆՏ

ԵՒ ԻՐ ՄԵԿՆՈՂԱԿԱՆ ԵՐԿԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Ճաշակ մը տալու համար ընթերցողներու, թէ ինչ յօրինուածքով կազմած է Սարգիս իր Մեկնութիւնները. կը ներկայացնեմ հոս Յովհաննու Մեկնութեան սկիզբը, համաձայն Երուսաղէմի թ. 855 և 1250 ձեռագիրներու: Թովմաս Մեծօփեցւոյ վկայութիւնը, թէ Ղուկասու Մեկնութեան արտագրութիւնը 1197ին «յոյժ սխալ» եղած է, կ'արժէ նաև այս երկու ձեռագիրներու համար: Ընդօրինակողները ոչ միայն անձիւդ բառեր կ'օրինակեն, այլ և կը յապաւեն բառեր, նախադասութիւններ, երբեմն կը համարձակին նաև յաւելուածներ ներմուծել: Բնականաբար այսպիսի խմբագիր աշխատութեան մէջ, ուր իւրաքանչիւր պարբերութիւն խնամով ընտրուած հանուած է սուրբ Հօր մը գրուածքէ, բնագրին ամենափոքր փոփոխութեամբ իսկ կարող է իմաստի խաթարում յառաջանալ: Բարեբախտաբար երկու ձեռագիրներն ալ ունեցած են իրենց ուրոյն ուրոյն գաղափար օրինակներ. այնպէս որ հնարաւոր կ'ըլլայ երկուքի բաղդատութեամբ քիչ շատ վերականգնել սկզբնագրին ընթերցուածները, մանաւանդ երբ համեմատութեան առնուին աղբիւրները, որոնցմէ օգտուած է Մեկնիչը: Կոչումները արժէք, նաև իմաստ ունին, եթէ անոնց հեղինակը անուամբ մատնանիլ եղած է: Սարգիս ջանք տարած է մէն մի կոչումի տէրը լուսանցքի վրայ համառօտագրով նշանակել: Օրինակողները սակայն հաւատարիմ չեն գտնուած նաև այս կէտի մէջ. անոնք չեն ունեցած բանասէրի ճաշակ և ճշգրտագրութիւն: Յառաջերթութեան մէջ առանձին ջանք ի գործ դրի, վեր հանել մէն մի պարբերութեան աղբիւրը և ցոյց տալ հեղինակները, այնպէս ինչպէս Սարգիս մատնանշած էր իր սկզբնագիր օրինակին մէջ: Որչափ ալ իմաստասիրօրէն քաղած հաւաքած է Սարգիս Ս. Հարց մտքերը, բայց և այնպէս

պէտք է ըսենք տժգոհելով, թէ տեղ տեղ չարաչար անդամահատած է պարբերութիւններ և խառն ի խառն զասուրած, երբ տուած է անշուշտ նաև իմաստը:

Ի սկզբանէ եր բանն:

ՍԱՐԳԻՍ. «Իսկ» հայր. «զբան» որդի. «է» հոգին սուրբ:

ԵՓՐԵՄ. Զի յայտ արասցէ, թէ իբրեւ զբան ընդ ասողին իւրում է [յամենայն ի գործս որդին եւ ոչ արտաքոյ քան զնա է], եւ կցորդ է ծնողին իւրում [յամենայն ի փառս]. զի ի միտ առցես, զի մինչեւ իցէ բան խաւսեալ է բանն. զի ահաւասիկ Զաքարիաս առանց շրթանց զպրութիւն խաւսեցաւ. զի որպէս բանիւ յայտնին ծածկեալք սրտի, այսպէս ծածկեալք նովաւ յայտնեցան: Վկայէ Պաւղոս ասելով. խորհուրդք Աստուծոյ Հաւր Քրիստոս է, որ նովաւ յայտնեցան ամենայն ծածկեալք իմաստութեանցն եւ գիտութեանց Աստուծոյ:

ՆԱՆ. Զի որպէս բանն ոչ ինքն յինքն, նէն ունի զգոյանալն եւ ոչ յոչնչէ զլինելն, եւ ոչ արտաքոյ մտացն զծնունդն, նոյնպէս եւ ոչ որդին յինքնէ գոյացեալ կամ յոչէէ յառաջ եկեալ. այլ որպէս բան առ միտսն կատարեալ ունի զծնունդն, նոյնպէս եւ որդի առ ի Հաւրէ (Նան. առ հայր) [գոյութենէ եւ ի յեութենէ եւ ի բնութենէ ծնեալ]: Տես որքան միով բանիւ ի ներքս ածելով փակեաց զանեղութիւն. զի որպէս ի ձեռն բանի զմիտսն ճանաչեմք, նոյնպէս և զհայր որդեով ճանաչեմք և զկամս նորա:

ՆԱՆ. Ի սկզբանէ էր բանն: Եւ զի՞նչ յայտ առնէ էրն, այլ զի ցուցցէ թէ յսկիզբն ժամանակին յորում Աստուած առնէր զերկինս եւ զերկիր եւ որ ի նոսա արարածք իցեն, բանն էր, որպէս զի զանեղութիւն բանին էրն ցուցանէ (Նան. ցուցցէ) եւ զեր ի վերոյ եղականացս կացցէ բանն. զի մի գունակ Արիօսականացն որ ի սկզբան լինելութեան արարածոց սկիզբն եւ արարած զորդի (Նան. զնա) իմանայցեմք:

ՍԵՒ. ՆԱՆ. Զի ոչ ասաց Մովսէս թէ ի սկզբանէ արար Աստուած զբանն, այլ Աստուած ի սկզբանէ արար զերկինս եւ զերկիր, որ պատմեն զփառս Աստուծոյ. մեք զմշտնջենաւորն ցուցանեմք:

ՆԱՆ. Վասն այնորիկ [ի սկզբանէ էր] բանն

աւետարանիչն յորջորջէ անձնաւորութիւն նշանակէ եւ զէականութիւն ընդ Հաւր. որ

ՍԵՔՆԻՐ. յառաջ քան զամենայն եւ զքնաւ յաւիտեանս ծնաւ անծին զծնունդն իւր հանդուակ. զի յառաջ քան զյաւիտեանս է ծնողն, յառաջ քան զժամանակս է ծնունդն։ Որով ամենայն ինչ եղեւ. եւ ժամանակք եւ յաւիտեանք։ Մի յորժամ լսիցես ծնունդ՝ մի մարմնական ինչ իրս կարծիցես, քանզի զանմարմնականէն է ճառս։ <եւ մի վասն զի> մեք ի հաւրէ եւ ի մաւրէ <չարչարանաւք> եւ միջնորդաւ եւ ժամանակաւ ծնանիմք, մի չարչարանս եւ մի միջնորդս եւ ժամանակս անժամանակին համարիցիւ. քանզի ինքն առանց իրիք պատճառանաց բաւական է իւրում կատարեալ ծննդեանն, ոչ ժամանակաց թիւք եւ աւգնականութեանս սպասաւորք։ Ծնաւ Աստուած առանց չարչարանաց, առանց հատուածոյ. քանզի ոչ է հնար հատանել անհատական բնութեան եւ բաժանել անբաժանականին։ Ապ' եթէ ամբարիշտ մտաւք ոք իմանայցէ եւ անկատար զկատարեալն առնիցէ, զի եւ ոչ հայր գտանի ամբողջ մնացեալ [եւ արարած ի վերայ բերեալ լինի]. այլ է եւ եղիցի հայր ամբողջ կատարեալ եւ ծնունդ լի բովանդակ. քանզի կատարեալ Աստուծոյ է ծնունդ. քանզի եւ է իսկ ճշմարիտ. զի ոչ երկինք ճանաչեն զանպատում ծնունդն. քանզի չէին մաւտ, եւ ոչ երկիրս՝ զի չէին հաստատեալ, եւ ոչ ծով զի չեւ եւս էին զատեալ մեկնեալ։

ԴԻՍԻՆ. Նովաւ է գերազարդն. ի նմանէ է ներքնադարդն եւ շրջադարդն։

ՅՈՒՐ. Եւ իմաստութեամբ նորա տարածեալ է համատարածն։

ԵՐԵՄ. Զի նա եղ զարեգակն ի լոյս տունընջան, զլուսին եւ զաստեղս ի լոյս գիշերոյ եւ աղաղակ ի ծովու եւ գոչեն ալիք նորա. Տէր ամենակալ անուն է նորա։

ՍԵՔՆԻՐ. Քանզի ամենայն ինչ Յիսուսին եկն ի լինելութիւն. ոչ ժամանակք, քանզի անժամանակ է. ոչ յաւիտեանք, քանզի յառաջ քան զյաւիտեանս է. ոչ հրեշտակք եւ ոչ հրեշտակապետք. ծնաւ Աստուած առանց կարեաց. ոչ խորհրդակից. մինն ծնաւ, մինն եւեթ գիտէ. ո իցէ որ ծնաւն, Աստուած. զինչ ոք իցէ ծնունդն. Աստուած։ Որպէս որսորդն ասէ, որ ոչ զծովակաց կամ զգետոց պատմէ եւ ոչ զաս-

տեղս երկնից նշմարէ յառաջնորդութիւն որոց։ Ոչ ասաց որպէս Մովսէս, թէ ի սկզբանէ արար Աստուած զերկինս եւ զերկիր. այլ անցեալ ընդ երկինս, ընդ ամենայն երեւելի եւ աներեւոյթ արարածս, ընդ ժամանակս եւ ընդ յաւիտեանս՝ ասէ, ի սկզբանէ էր բանն։

ԵՓՐԵՄ. Այլ գուցէ բան գոյզն լսիցես եւ խոնարհեցուցանիցես զորդի առ այն իրքեւ զձայն ինչ ի շրթանց բարբառեալ լեզուաւ եւ շրթամբք ընտրեալ, ընդ աւգ բախեալ, ապա կատարեալ ձայն արձակեալ. զի ձայն ոչ է ի սկզբանէ. քանզի յառաջ քան զասելն չէր նա, եւ յետ ասելոյն զարձեալ չէ նա։

ՍԵՔՆԻՐ. Այսպիսի ինչ իմանալ զմարմնականաց է եւ ոչ զանմարմնոյն։

ԵՓՐԵՄ. Այն որ նա ինքն է նմանութիւն կերպարանաց հաւր իւրոյ, եւ ոչ է նա ձայն հաւր այլ պատկեր նորա. թէ որդին քո, որ ի քէն ծնեալ լինի, քեզ նման է, իսկ զիարդ արդեւք Աստուած ձայն ծնանէր եւ ոչ Աստուած։ Զի թէ որդին եղիսարէթի որ ձայն կոչեցաւ, մարդ է, իսկ որդին որ կոչեցաւ բան, Աստուած է, եւ թէ ասիցես թէ բան կոչեցաւ որդի, դիտասլիւր զի Յովհաննէս որ կոչեցաւն ձայն, անձն իսկ է. նոյնպէս եւ Աստուած որ կոչեցաւն բան, իսկ եւ իսկ Աստուած է։

Յառաջբերութիւններս տեղ տեղ անհամաձայն են հրատարակութեամբ ծանօթ բնագիրներու հետ. պատճառը շատ տեղ օրինակողներու անհմտութեան վերագրելու է անշուշտ. բայց կ'երեւայ թէ տեղ տեղ նաեւ խմբագրողը իր բաժինն ունի, այնու որ այդ փոփոխութիւնները կամ յաւելուածները կարծես նպատակ ունին բնագիրներու միտքը պարզել եւ անյարիր մէջբերումները իրարու շաղկապել։

2. Մեկնութիւն Ղուկասու Աւետարանին

Ունիմ աչքի առաջ երուսաղէմի թ. 149, օրինակուած ի Զմիւռնիա 1821ին Տէր Յովհաննէս քահանայի ձեռքով, եւ կը կրէ խորագիրս։

Ամեկնութիւն սուրբ Աւետարանին Ղուկասու. հաւաքեալ սրբոյն Սարգսի Հայոց վարդապետի եւ անյաղթ հետտորի, ի սրբոց աստուածաբան վարդապետացն մերոց եւի-

բեմի, Ոսկեբերանի, Կլարդի, Ստեփանոսի, Իզնատիոսի և այլոց վարդապետացն մե-
րոց, զոր տեսանես յառաջիկայդ»:

Յովհաննէս քահանայ ձեռքի տակ ունե-
ցած է օրինակ մը, որ ուղղակի կամ ան-
ուղղակի գաղափարուած է Թովմաս Մե-
ծոփեցւոյ և իր աշակերտաց ձեռքով: Թով-
մայի Յիշատակարանը պահուած է ձեռա-
գրիս մէջ, որմէ կարեւոր կը համարիմ յա-
ռաջ բերել հետեւեալն: Թովմաս Մեծոփեցի
կը գրէ ի Մեծոփայ վանս.

«Եւ պարտ է գիտել, թէ զիա՞րդ գտեալ
եղև Մեկնութիւն Աւետարանիս: Հարկեցին
զմեզ եղբարքն զՄեկնիչն տէր Իզնատիոսի
գաս ասել. և մեք սկսաք ըստ տկարիմաց
մտաց մերոց բան բան լուծանել: Եւ տե-
սաք զի ոչ էր առեալ զբնագիրն ի ներս
ըստ կարգի մեկնութեան բանի. մտաք և
բանիւ տրտնջէաք որպէս սովորութիւն մեր.
Եւ ի նոյն աւուրսն եկն եհաս տօն ծննդեան
Քրիստոսի Աստուծոյ մերոյ. ելեալ գնացաք
ի գեօղ մի կոչեցեալ Ասպիսական. մտաք
յեկեղեցիին և գտաք ի խորանին ձգեալ ան-
պիտան ի մէջ մոխրակուտին. առեալ տե-
սաք և գոհացաք զԱստուծոյ, զի վասն
առատատուր պարգեւացն և ձրի շնորհացն
զհասարակաց զշահն և զօգուտն ոչ արգիլէ
ողորմած և մարդասէրն Աստուած ի յա-
նարժան վարդապետաց: Եւ վասն դառն և
չար ժամանակիս թշուառութեան ութ ամ
ի մէջ անցաւ և ոչ կարացաք գրել: Իսկ
յորժամ բարեբարն Աստուած սակաւ ինչ
անդորրութիւն ետ, ի ՊԶԶ (1427) թուա-
կանիս կամօքն Աստուծոյ սակաւ ինչ ես
գրեցի և զբոլորն գրել ետու հոգեւոր որդւոց
իմոց Թովմայ գրագրի և Յովհաննէս գրոց
աշակերտի: . . . Բայց սկիզբն անկեալ էր
մինչև «Յամեսեանն վեցերորդի»: Նախեր-
գան Իզնատիոսին եղի: Եւ զցանգ խորա-
նացն նոր եղի, զի զիւրազիւտ և առձեռն
պատրաստ ուսումնասիրացն եղիցի: Այլ
սխալանացն անմեղադիր լինել աղաչեմ.
զի էր ինչ որ ջնջեալ էր. և էր ինչ որ գրիչն
սխալեալ էր. զի ՄԼ (230) ամաց էր: Եւ
յոյժ աշխատութեամբ ի յաւարտ ամաք. . .

Գրեցաւ աստուածային կտակս ի սուրբ
Աստուածածնի, որ այժմ Մոծոփայ վանք
անուանի, ի գաւառս Քաջբերունեաց: Եւ
օրինակն առաջին գրեալ էր ի սուրբ ուխտն
եղէվարդու ի դուռն սրբոյ եկեղեցւոյն

Թէողորոսի, որ էր գրեալ յառաջին օրինա-
կէն ձեռամբ աշակերտաց սուրբ վարդա-
պետին Սարգսի՝ Դաւթի և Ներսէսի, յոյժ
սխալ: Քրիստոս Աստուած ողորմի հոգաց
նոցին ամէն¹¹:

Կը տեսնուի այս տողերէն, թէ ձեռա-
գիրը, զոր գտած է Մեծոփեցի Ասպիսակն
գիւղին մէջ, օրինակուած է «յառաջին օ-
րինակէն ձեռամբ աշակերտաց սուրբ վար-
դապետին Սարգսի», որոնք են Դաւթ և
Ներսէս, 1197ին յեղիվարդ: «Բայց սկիզբն
անկեալ էր մինչև Յամեսեանն վեցերորդի», կը
գրէ Մեծոփեցի. «զնախերգան Իզնատիոսին
եղի. և զցանգ խորանացն նոր եղի», այս-
ինքն ձեռագրէն բաժնուած ինկած են Սար-
գսի Ներածութիւնն և Մեկնութիւնը Ղուկ.
Ա. 1-5 համարներու. պակասն լրացուցած
է Թովմաս Իզնատիոսի Մեկնութեանն փոխ
առնելով: Զեռագրին վերջաւորութեան մա-
սին խօսք չ'ըներ Թովմաս. բայց կ'երևայ
թէ նաև այս մասէն թղթեր ինկած են.
զոնէ երուսաղէմի օրինակին մէջ կը պակսի
Ղուկ. ԻԴ. 48-51 համարներու մեկնու-
թիւնը: Եթէ ստուգիւ կը պակսէր ձեռագրին
մէջ Մեկնութեան վերջաւորութիւնը, Թով-
մաս ո՞ւր կարգացած է Զեռագրին յիշատա-
կարանը: Յանկալի էր գիտնալ նաև թէ այդ
ձեռագիրը միա՞յն Ղուկասու Մեկնութիւնը
կը բովանդակէր, թէ կար հոն նաև Յով-
հաննու Մեկնութիւնը: Ինձ ծանօթ է թէ
Թովմայի օրինակութեան մէջ Ղուկասու
Մեկնութեան կը յաջորդէր Յովհաննու Մեկ-
նութիւնը:

Երուսաղէմի թ. 149 խորագրին մէջ կը
գրէր. «զոր տեսանես յառաջիկայդ», այս
ինքն անունները այն աղբիւրներու, որոնց-
մէ օգտուած է Սարգիս, նշանակուած պիտի
գտնենք բնագրին լուսանցքներու վրայ: Օ-
րինակողը սակայն զանց ըրած է տալ զա-
նոնք համառօտագիրներով, Թովմայի օրի-
նակը ունէր զանոնք. ինչպէս ունին նաև
հատակոտորները, ի լուսանցս նշանակելով
հատուածներու կից. Իգ., Ստ., Յոհ., Եփ.,
Կր., Կղ., Բղ., Գր. ևն.:

Պակասները, զորոնք ցոյց կու տայ ե-
րուսաղէմի թ. 149, կարելի է լրացնել այն
հատուածներով, զորոնք հաւաքածոյ ձե-

11) Յիշատակարանս ծանօթ է Հ. Ալիշանի «Այբարատ»:
էջ 199, ուր յառաջ կը բերէ վերջին տողերը:

ապրիլները յաճախ յառաջ կը բերին Սարգսի Ղուկասու Մեկնութենէն, թէ և միշտ անաշունու շինուած այս հատակոտորներու վրայ կրնամ ներկայացնել Ղուկասու Մեկնութեան սկիզբն ու կատարածը այսպէս. խորագիրը կու տամ ենթագրաբար.

«Մեկնութիւն Ղուկասու Աւետարանին, արարեալ Սարգսի վարդապետի Կունդ կու չեցելոյ»:

Պատճառ Աւետարանին Ղուկասու — Ղուկասու Աւետարանն երրորդ է ըստ կարգի աւետարանչացն և հաւասար է գետոցն որ ի չորս բաժանի. . . :

Մեկնութիւն: — Քանզի բազումք յաւժարեցին վերստին գրել: Որպէս ի հնումն զմարգարէութիւն յաւժարեցին գրել, ոմանք ճշմարտապէս՝ որպէս Նոայիաս և Երեմիաս, և ոմանք ստույթեամբ՝ որպէս Անանիա որդի Աղարիայ . . . :

Վերջ՝ Մատնէ ի ներքին կողմն վարագուրին ի սուրբն սրբոց, յանկոխն արարածական բնութեանս. ըստ այնմ թէ սուրբ Երրորդութիւն միայնակ չըջի ի սուրբն սրբոց և զամենայն արարածս արտաքոյ եթող առաջին և երկրորդ վարագուրին: Իսկ զասք առաքելոցն տուեալ զինքեանս մեծի ճգնութեան՝ պահոց և աղօթից կային մնային Հոգւոյն սրբոյ ըստ խոստմանն: Որոց և մեզ արժանի արասցէ Քրիստոս Աստուած ճգնակից լինել նոցա և հոգւոյն հաղորդ. որում փառք և պատիւ յաւիտեանսս:

Ձեռագիրք. Երուսաղէմ, թ. 149: Վեներաբիլ, Մխիթ. Մատ. յամէ 1197: Լաղ. ձեմ. յամէ 1427: Հատակոտորներ՝ Երուսաղէմ, թ. 1250, թգ. 269ա-275 (ԺԳ. դար): Մեկ. Ղուկ. ԻԴ. 41-53 համարներու, 204բ-210բ (Ղուկ. Բ. 21-41 համարներու):

3. Մեկնութիւն Եսայեայ

Սարգսի Վ. Կունտ գրած է նաև Եսայեայ Մարգարէութեան Մեկնութիւն մը, որ մինչև այսօր երևան եկած չէ: Այս գրութեան մասին մեր ունեցած տեղեկութիւններն են.

ա. Երեմիա, աշակերտն Գեորգ Վ. Սկեռացւոյ կը գրէ անոր խմբագիր Եսայեայ Մեկնութեան Ընծայականին մէջ. «Եւ զի էր Սարգսի վարդապետի հոգացեալ (զՄեկ-

նութիւն Եսայեայ)՝ առեալ և զայն և զայլ բանն սրբոց մեկնչացն՝ համառօտ զուգեաց (Գեորգ) առ իրեարս կարճարանութեամբ եղեալ և զմտացն ամբողջ ունելով զգորութիւն» Երուսաղէմ, թ. 365 (յամէ 1299). հմմտ. Սիսուան, էջ 103:

բ. Յովհաննէս Վ. Կոլոտիկ 1415ին նոյնպէս ունեցած է այդ Մեկնութիւնը ձեռքի տակ, որուն խմբագիրը կ'անուանէ «Սարգիս վարդապետ ի վանացն Խորանաշատոյ՝ կոչեցեալ Կունտ»:

Հ. Գր. Զարպանելեան¹², հաւանօրէն Սկեռացւոյ տողերը աչքի առաջ ունենալով, յանձին Սարգսի կը տեսնէ Սարգիս Վ. Շնորհալին, երբ կը գրէ. «Սարգսի կ'ընծայուի և Եսայեայ մարգարէութեան մեկնութիւն մը՝ որ մեզի անծանօթ է»։ Այսպէս կը գրէ նաև Հ. Միքայէլ Զամէնեան¹³. «Սարգիս վարդապետ աշակերտակից Իգնատիոսի . . . արար և զՄեկնութիւն մարգարէութեան Եսայեայ. յորմէ բերէ վկայութիւն Գեորգ վարդապետ»։ Յովհաննէս Կոլոտիկ զիտէ սակայն այդ Սարգսի մականունը Կունտ, հետևաբար տեղիք չկայ Սարգիս Շնորհալւոյ ընծայելու Մեկնութիւնս:

Սարգիս Կունտ անշուշտ նաև այս Մեկնութիւնը յօրինած էր խմբագրելով սուրբ Հարց խօսքերով:

4. Մեկնութիւն Մարկոսի Աւետարանին

Պատահած եմ էջմիածնի ձեռագիրներու մէջ ընդարձակ հատուածի մը, որ առնուած է Մարկոսի Աւետարանին խմբագիր Մեկնութենէ մը, խմբագրուած ըստ ամենայնի նոյն ոճով, ինչպէս խմբագրուած են Սարգիս Կունտի Յովհաննու և Ղուկասու Մեկնութիւնները. աղբիւրները նշանակուած են լուսանցքի վրայ համառօտագիր. ՈԿ. Պր. Իգ. Կր. Ստ. Սկեռացի. Եփ. Աղ. Գր. Մու. Սով. Ով. Պղ. Սա. Պվ.։ Այս հատուածն է սկզբնաւորութեամբ և վերջաւորութեամբ.

«Ամէն ասեմ ձեզ. են ոմանք որ աստ կան: Ընդէ՞ր յառաջագոյն ասաց. զի կիրթք լիցին այնպիսի տեսլեանն և թուով աւուրցն կարօտասցին. . . :

Վ. Կամ ըստ այնմ որ ասէ. Հայր փա-

12) Պատմութիւն Հայկական Հին Դպրութեան, էջ 628:

13) Պատմ. Հայոց, Գ. էջ 57:

աւարեան զորդի քո: Հրեայք վասն Զօրաբարէլի տեսն զայս: այնչափ հեռի էին ի նմանէն»:

Հեղինակը անձանօթ կ'երևայ Բարսեղ Մաշկեւորցիի Մարկոսի Մեկնութեան, որուն Բ. հատորն միայն հասած է մեզի: Կը գրէ Հ. Ղ. Ալիշան, Ստուան 516, թէ զտած է տեղ մը յիշուած, թէ Գրիգոր Ա. նաւարդեցի հեղինակած ըլլայ «Մեկնութիւն Մարկոսի աւետարանի»: Ինչ անձանօթ է բացի Մաշկեւորցիէն, ուրիշ հեղինակ, որ զբաղած ըլլայ Մարկոսի Մեկնութեամբ: Բայց Սարգիս Կուշտ, որ տուած է Ղուկասու և Յովհաննու խմբագիր Մեկնութիւնները, կարող էր իր կարգին նաեւ Մատթէոսի և Մարկոսի աւետարաններու մեկնութիւնները գրած ըլլալ:

5. Մեկնութիւն Գործոց Առաքելոց

Այսպիսի գրուածք մը ձեռքի տակ ունեցած է յանուն Սարգիս վարդապետի Մատթէոս Վ. Տաթեւացի, որ 1411ին գրած է Գործոց Մեկնութիւն մը. կը գրէ. «Տատանեալ կենօք ձեռնարկեցի հաւաքել զբանս սուրբ հօրն մերոյ Ոսկերեանի և Նփրեմի և զոր ինչ պարգեւեաց մեզ Հօգին սուրբ», և զարձեալ. «այլ և երջանիկ հօր մերոյ Սարգիս վարդապետի յիշատակ ի սմա եղիցի, զի պատճառ եղև մերոցս գծագրութեան. քանզի նա կանխառ համառօտեալ էր զսա (այս ինքն զբանս Ոսկերեանի և Նփրեմի), և միք նորին շաւղացն հետեւեցաք»:

Գործք Առաքելոցի խմբագիր Մեկնութիւն տուած է մեզի Գէորգ Վ. Սկեւուցի: Յանուն Սարգիս վարդապետի նման աշխատութիւն մը ծանօթ է Գայսօր. եթէ յօրինուած է երբեք, իբրև հեղինակ ամէնէն յառաջ Սարգիս Կուշտ պէտք է նկատի առնուի:

6. Լուծմունք Աղօթից Գրիգորի Նարեկացւոյ

Հ. Միք. Չամչեան¹⁴ խօսելով Սարգիս Վ. Շնորհաւույ մասին կը գրէ. «Արար սա ընդարձակ բանիւք եւ յստակ ոճիւ նաեւ զՄեկնութիւն Աղօթից Նարեկացւոյն, որ-

պէս աւանդի ի յիշատակարանս ինչ, զոր այժմ չունիմք ի ձեռին»:

Յիշուած Մեկնութեան հանդիպած եմ երուսաղէմի թ. 1324 ձեռագրին մէջ. կը վարանիմ ընծայելու զայն թէ Սարգիս Շնորհաւույ եւ թէ Սարգիս Կուշտի: Բայց տեղս յարմար կը համարիմ ներկայացնել բանասէրներուն գրուածքիս սկիզբն և վերջաւորութիւնը, յիշատակարանին հետ:

7. Լուծմունք հոգեկիցն բանից սրբոյն Գրիգորի

Չայն հառաչանաց: (ԼԾ.) Չայն յերկուս բաժանի. ի յօգեալն եւ յանյօղն...: Վերջ՝ Ի քսոից աչաց: (ԼԾ.) Աչք մարմնոցս իմս և իմ եղբօրն չորս էին. բայց տեսութիւն խորհրդոյն և շաւղին մի: Ի փառս Գրիստոսի Աստուծոյ մերոյ որ աւրհնեալ յաւիտեանս. ամէն:

Փառք... Աստանօր իրաւապէս զկայ առցէ ի կատարումն և ի զլիսաւարտման այսմ աստուածապատում մատեանս, որ կոչի Նարեկ. զոր արարեալ է մեծ վարդապետն Հայոց Գրիգոր Նարեկացին. և զԼուծումն սորին զոր արար յետոյ վսեմամիտն և ճարտարաբանն Սարգիս վարդապետն ի յառաջին ձայնէն մինչև յաւարտ շնչոյն. լիակատար զԼուծումն արել է:

Այժմ աղերսեմ և խնդրեմ ի խորոց օրտէ զհարազատ գուժ հարց և եղբարց մերոց հոգեւորաց, զի կաթ մի արտասուեաց ի կաթիլ զուլէ ձերդ մաղթանաց ցաւընցէ վասն կենաց հարազատին իմ եղբօր Յովհաննէս կոչեցելոյ. և ինչ տառապեալ ողոյս Սիմէոնի¹⁵. և լուսացէ զբաղմաշարաւ ոսկերս մեզօք մեռելոյս. զի մեք երկոքեանս եմք գրել զգիրքս. սակաւ մի ի Նարեկացոյն և զԼուծումն ես գրեցի: Եւ զգիրալիր ընթեռնելոյն զձեռագիրն նա գրեց: Որք իբրև զմի մարմին բանական ի յերկուց առ մի կերպարան շինել զիմաց կենցաղակցելով. ոչ միայն հարազատք, այլ և միաշունչ համապատիւք զուգահաւանք, ի չօրից աչաց առ մի և նոյն շաւղ խորհրդոյ ասեալք: Եւ մաղթեմ եղբայրական սիրով ի ճաշակողաց յայսմ սեղանոյ յօքնօրէն և ախոր-

15) Թ. 311ր կայ նաև յիշատակագրութիւնս ուրիշ ձեռքի. «Չվերստին ստացաւ սուրբ զորոց Գրիգորի Նարեկացւոյ զՍիմէոն արեղայն գգիլիստիայն այժմուս և զվարդապետն ձայնաւորաց և տեսրի (չարունակութիւնը ընթացած)»:

14) Պատմ. Հայոց, Գ. էջ 51.

ժահամ, հանդերձեցելոյ յիշատակել ի մազ-
թանս ուղիղս զծնողսն մեր և զեղբայրն
մեր որ հոմանուն է ատենահաս զօրապա-
րին [Սարգիս]։ Եւ դարձեալ կրկին անդամ
աղաչեմ զի յիշման արժանի առնէք զՅով-
հանէս կրօնաւորն զմականունն մի մոռա-
նայք, զի սա ծնող է մեզ հոգեւոր և նա-
խախնամող մեր տկարութեանս. որ և ձեզ
յիշողացդ և մեզ յուսացելոցս առ հասա-
րակ ողորմեցի բարեբար և բազում ողորմն
Աստուած, Յիսուս Քրիստոս. ամէն։

Շրջապատեալ զմեզ շրջագայութեամբ
տուժարի հայկազեան սեռից. հարիւրից
կրկնակի քառից և միոյ թուոյ և Ժ. անց
վեցից [ՊԿԼ = 1112]. յորում ամի թագա-
ւորեալ էա զղանութիւնն Ճալալատին սուլ-
տանն, որդի թողթամիւշին, և տիրեաց աշ-
խարհիս մերում որ կոչի Սուրխաթ։ Գրե-
ցաւ սայ ի յայսմ նահանգիս, ի հրեշտակա-
բնակ վանօրեայս առ դուրս սուրբ Լուսա-
ւորչիս, որ է հուպ սուրբ Յովհանէսին, որ
կոչի Օթուզ։ Նաեւ զպատուելի ծերունին
զՏաւնական վարպետն և զհեղաոգի եզ-
բայրն մեր զԹագէսոս կրօնաւորն և զՍար-
գիսն յիշեցէք։

Ձեռագիր՝ Երուսաղէմ, թ. 1324, թղ. 312ա-359ա։

Ուրիշ ձեռագիրներու մէջ Լուծմունքս
կը վերագրուի Ներսէս Լամբրոնացւոյ. կան
ձեռագիրներ ալ, որոնք չունին հեղինակի
անուն։

Կ'աւարտեմ այս տեղ աշխատութիւնս,
յուսով թէ ժամանակը պիտի տայ մեզի
անդրագոյն տեղեկութիւններ Սարգիս Կուս-
տի կեանքէն եւ երեւան պիտի հանէ նոր
գրուածքներ ալ անոր արդիւնաւոր գրչէն։

Երուսաղիմ

Հ. Ն. ԱԿԻՆԵԱՆ



ԼԵԶՈՒՆԳԻՏԱԿԱՆ

ԱՐԴԻ ԱՇԽԱՐՀԱԲԱՐԻ

ԿԱԶՄՈՒԹԻՒՆՆ ՈՒ ԶԱՐԳԱՅՈՒՄԸ

Նոր կազմուած լեզուներու շարքին
պէտք է դասել աշխարհաբարը, առանց
մերժելու անոր հեռաւոր աղբւրը՝ հին ա-
տեններ գոյութիւն ունեցող աշխարհիկ կարգ
մը բարբառներու հետ, որոնցմէ հետքեր ալ
կը պահուին տակաւին մեր մատենագրու-
թեան մէջ։ Նոր է անիկա իր ձևերու ընդ-
հանուր յօրինուածքին՝ և կարճ ժամանակի
մէջ ունեցած կազմութեան տեսակէտով,
որուն դար մը անգամ պէտք չեղաւ ինք-
զինք ձերբաղատելու գրաբարի խնամութե-
նէն, և իրրեւ նոր լեզու գրական տարազ մը
հագնելու։ Գրաբար և աշխարհաբար բառա-
րանին գրեթէ նոյնութիւնը պատճառ մը չէ
անշուշտ որ քերականական ու համաձայ-
նական հանգիստութիւն մըն ալ հետեցնելու
խաբկանքէն տարուինք, քանի որ լեզուի
մը ընդհանուր նկարագիրը կազմելու հա-
մար ոչ այնքան բառարանին կ'ապաւինինք,
որքան անոր քերականական կազմութեան։

Այդ իմաստով՝ նոր կազմուած լեզու
մը, տարակոյս չկայ թէ, բարեփոխումնե-
րու և ընդհանուր կարգաւորման պահանջ-
ներ շատ աւելի կը ներկայացնէ, գէթ իր
վերջնական ձևը ստանալու համար, և իր
քերականութիւնը ձերբաղատելու կամայա-
կան ու մասնաւորներու յատուկ նախընտ-
րութիւն ունեցող ձևերէ, մնաց որ նոյն
այդ պահանջէն զերծ չեն արգէն իսկ ի-
րենց ընդհանուր կաղապարումը ստացած
ուրիշ լեզուներ, որոնք աշխարհաբարէն հին
թուական մը կ'արձանագրեն իրենց սկզբնա-
ւորութեան։

Այս պահանջին ծնունդն են անշուշտ
հայրենի երկրէն դուրս՝ ցարդ կատարուած
ու առաջարկուած ուղղագրական ու քերա-
կանական այն ցուցումները, և հուսկ ուրեմն
հայրենի հողին վրայ յառաջ եկած այն մեծ
շարժումը, որ «Երեւանեան ուղղագրու-
թիւն» անունին տակ կը ներկայանայ մեզի։